

ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ:



Երջանկայիշատակ Գէորգ Գ. կսթուղիկոսի օրով ս. Էջմիածնի տաճարին կից արևելեան մասում շինուել է թէև ոչ առանձին գեղարուեստական պատշաճութեամբ Մայր Աթոռի յայտնի թանգարանը, բրի մէջ ամփոփուած են մեր եկեղեցական հին անօթները, խաչերը, զգեստները, այլ և այլ հնութեան յիշատակարաններ, կաթուղիկոսների անձնական իրեղէններից մի մասը, հին գրամներ, մի քանի նկարներ ևն: Այդ բոլորը աննշան, չնչին կերևայ մեր աչքին, եթէ մենք ի նկատի ունենանք մեր ս զգային եկեղեցու փայլուն դարևոր շրջանը, մեր եկեղեցիների անցեալ ճոխութիւնը, հարստութիւնը, բայց պատմական գրութեան ճախորդ պոյմաններով ամեն բան բացատրոււմ է: Յաւալի է այդ, որովհետև յիշատակարանների անհետանալով մենք ոչ միայն նիւթական կորուստ ենք ունեցել, այլ զրկուել ենք այն գլխաւոր էական աղբիւրներից, որոնց գոյութեամբ մեր անցեալ կեանքը ուսումնասիրելիս մեծ դիւրութիւններ կուեննայինք: Ասկայն եթէ լաւ մտածելու և միջոցներ ձեռք առնելու լինինք, շատ բան այդ անգաւնալի համարուած կորուստից կարող ենք դարձեալ յետստանալ, որով թէ մեզ և թէ մեր ասպագայ սերնդին մեծ ծառայութիւն մատուցած կլինինք: Մայր երկիրը մեծ խնամքով պահպանել է իւր ծոցում ինչպէս իւր սնուցած զաւակների վերջին մնացորդները, այնպէս նաև նոցա մտածմանց և աշխատանագ յիշատակարանները, հարկաւոր է միայն լուրջ ուշադրութիւն դարձնել այդ իւրեանց հնութեամբ սրբացած իրեղէնների վրայ, երևան եկած ժամանակ զգուշութեամբ և խնամքով ի մի հաւաքելով պահպանել և այդպիսով կարելի է գտնէ մի, թէ և շատ չնչին մասը գտնել:

Մենք չունինք մի մեծ ազգային թանգարան, որտեղ ի մի հաւաքուէին այգտեսակ նշխարները. ոչ էլ առանձին առանձին քաղաքներում հիմնուած են այգպիսի կենդրոնատեղիներ, ուստի միակ յարմար տեղը առայժմ ս. Եջմիածնի թանգարանը պիտի հաշուել: Հնութիւն ժողովելու նախաձեռնութիւնը բնականաբար պէտք է մեր զարգացած, նոցա մեծ արժէքը գնահատող հասարակութեանը պատկանի: Անհրաժեշտ էր անկասկած որպէսզի այդ ուղղութեամբ գործունէութեան ձգտումները առանց հետեւանքի և կղզիացած չմնային, այգ գործով հետաքրքրուող և նրան ծանօթ անձինք մտածեն լուրջ կերպով այգ մասին, անձնական տեսակցութեամբ կամ նամակներով իրար հետ կապեր հաստատելին և իւրաքանչիւր ոք ի նկատի առնելով իւր գաւառի, քաղաքի կամ գիւղի հանգամանքները, ծրագրեր առաջարկէր ընգհանուր համաձայնութեամբ մշակուէր սրտուէր թէ հաւաքելի իրերի տեսակները, թէ հաւաքելու միջոցները և եղանակը և վերջապէս թէ տեղը: Արովհետեւ այս հարցը մեր սրտին շատ մօտ է, յարմար առթիւ մենք գարձեալ նրան կրգանք, այժմ բաւականուում ենք լոկ հարցը գնելով ցանկացողներին հրաւիրել ձայնակցելու: Իսկ այս անգամ խնդիրը արծարծելու շարժառիթը հետեւեալն է. մեր ս. Եջմիածնի միաբանները գտնուում են այլ և այլ պաշտօններով երկրի ամեն մասերում, կամ իրրեւ վանահայրեր, կամ յաջորդներ, կամ թեմակալներ: Նոցա մէջ կայ ինչքան նկատել եմ առանձին սէր հնութիւններ ժողովելու, գլխաւորապէս հին դրամներ և նոքս էլ իսկապէս ամենից մեծ գիւրութիւն ունեն այգ անելու: Բայց ի՞նչ են գառնում նոցա այգտեսակ ժողովածուները, պատասխանը շատ պարզ է. որովհետեւ դոքա կամ չեն ցանկանում կամ առանձին ուշադրութիւն չեն գարձնում կենդանութեան ժամանակ իրանց ունեցածը ըստ պատկանելոյն ս. Եջմիածնի թանգարանին ուղարկելու, ուստի հազիւ է պատահում, որ նոցա մահից յետ մի բան տեղ հասնէր. ի հարկէ եղել են չնչին բացառութիւններ:

Ահա այգպիսի մի բացառութիւն է ներկայանում մեզ այսօր չին Նախիջևանի յաջորդ Գրիգորիս վարդապետը, որը ոչ միայն

սիրահար և ժողովող է հնութեանց, այլ հասկացել է նաև, որ միանգամայն աննպատակ կլինեն իւր աշխատանքները, եթէ նա ժողովածոյքը մօտը պահելով թոյլ տայ, որ իւր մահից յետոյ կօրչէին, ինչպէս սովորաբար պատահում է մեր հոգևորականների ստացուածքի հետ: Սրինականեր հազարաւորներ են, բաւականանաւոր միայն ամենալերջինը յիշելով: Ատրպատականի առաջնորդ Ստեփան եպիսկոպոս Մխիթարեանը վախճանում է, մեր լրագրերը հաղորդում են, թէ նա թողել է շատ գրքեր և ձեռագրեր, ս. էջմիածնում ստացւում են մի փոքրիկ արկղ գրքեր. բայց այդ գրքերի մէջ ոչ մի պահելու արժանի գիրք չկայ, իսկ ձեռագրերի պաշարն էլ կազմում են Արել եպիսկոպոսի մի քանի քարոզ-գրքերը: Ուր մնացին նրա անձնական գրութիւնները, նորա գրադարանի գրքերը:

Գրիգորիս Հայր սուրբը կարճ ժամանակ մնալով Հին-Նախիջևանի փիճակում նկատել է, որ այդ գաւառը շատ հարուստ է հնութիւններով և սկսել է հաւաքել և հաւաքածը բերաւ այստեղ յանձնեց ս. էջմիածնի թանգարանին: Այդ փոքրիկ, բայց ընտիր ժողովածուն ունի մի քանի այնպիսի հազուագիւտ կտորներ, որ իւրաքանչիւր թանգարանի զարդ կրկազմեն: Երեղէնների մէջ կան պատմական և նախապատմական հնութիւններ, որոնցից երկրորդները աւելի հետաքրքիր են: Սոցա մէջ յիշենք մի քանիսը. Նախիջևանի գաւառը մինչև օրս էլ յայտնի է իւր բազմաթիւ օձերով և ժողովածուի մէջ էլ կան 11 հատ քարացած օձեր, որոնցից 10 փոքր են և պահուած է միայն պոչի մասը՝ գալարուած գրութեամբ, այնպէս որ խխուճների մեծ նմանութիւն ունին, իսկ մէկը 17 սանտիմ. լայնութիւն ունեցող օձի մէջքի մասն է՝ 19 սանտիմ. երկարութեամբ. սոքա գտնուել են Կարմիր վանքի լեռներում: Այս առանձին ուշագրութեան արժանի է մի գնդաձև քարացած դամաքային մեծ խխուճ, որին Գրիգորիս Հայր սուրբը քարացած նռան տեղ է ընդունում, որովհետև այդ մարմնի միջում կան փոքրիկ նռան հատիկների կերպարանք ունեցող մարմնիկներ, բայց նրա արտաքին ձևը և ոչ մի նմանութիւն չունի նռան հետ, սա ևս գտնուել է Կարմիր վանքի լեռներում:

Քարացման զարմանալի օրինակներ են ներկայացնում Նախի-
ջևանի աղահանքում գտնուած ձկները, որոնք մեծ քանակութեամբ
պահուել են կաւային շերտի մէջ սղմուելով, այդ շերտերի վրայ
թողել են իւրեանց արտասուութիւնը, առանց շոշափելի մարմին
թողնելու: Այդ շերտերը $\frac{1}{2}$ սանտ. հաստութիւն ունին և եթէ
քերում ենք մի ձկան պատկերը, տակից երևան է գալիս մի ուրի-
շինը: Քարացած իրերի մէջ յիշելու արժանի են նաև Վարալա-
գեազ գիւղի մօտ գտնուած փոքրիկ, հրացանի գնդակի մեծու-
թիւն ունեցող կոլոր քարերը, որոնք կարող են քարացած պտուղ-
ներ լինել, ապա մի քանի բզեզներ, մի գորտ, մի կիսագունդի
ձևով՝ կրիայի նմանութեամբ կենդանի, քարացած բոյս ևն:

Իսկ պատմական ժամանակի հին իրերի ժողովածուի մէջ առա-
ջին տեղը բռնում են Հայր սուրբի ոսկեայ, արծաթեայ և պղնձեայ
գրամները. 3 հատ ոսկի, 77 արծաթ, 114 պղնձ և մի քանի հատ
բրոնձեայ գրամներ: Գրամների մէջ պակաս են հայկական գը-
րամները, որից միայն Տիգրան երկրորդի և Արշակ մեծի գրամ-
ները կան, երկուսն էլ շատ յաճախ երևացող գրամների թւիցն
են, իսկ միւս գրամները պատկանում են այն բոլոր աէրութիւն-
ներին, որոնք մի ժամանակ տիրել են Հայաստանին՝ սկսած Ազէք-
սանդր Մակեդոնացուց մինչև մեր վերջին իշխողները: Շատ հե-
ռուն կգնայինք, եթէ մի առ մի յիշէինք ժողովածուի յայտնի
գրամները և նկարագրէինք նոցա, բայց մի կէտ հարկաւոր եմ
համարում անուշադիր չթողնել, այդ այն է, մինչև օրս ես ա-
ռիթ եմ ունեցել մեզնում տեսնել մի քանի թէև աննշան գրա-
մական ժողովածուներ և իսկոյն նկատել եմ, որ շատութեամբ
առաջին տեղը բռնում են պարսկական Սասանեան ժամանակի
գրամները և ապա շատ են գտնուում նաև Հռոմէական գրամ-
ներ, մանաւանդ Սգոստոս կայսերը: Նրանցից շատերը մինչև օրս
էլ գործ են գրւում իրրև կանանց զարգարանքներ և գրամ ժո-
ղովողները լաւ կանեն այդ բանի վրայ ուշադրութիւն դարձնեն:

Յունական հնութեանց յիշատակարանների մէջ, կարելի է տեսն
բացարձակապէս, առաջին տեղը իւրեանց շատութեամբ բռնում են
խեցի անօթները, որոնք ծառայելով ոչ միայն իրրև աւօրեայ

գործածութեան անօթներ, այլ նաև իրրև Լրօնական սպասներ, գտնուել են և դեռ գտնուում են մեծ քանակութեամբ Հին տաճարների աւերակների կոյտերի մէջ և մանաւանդ գերեզմանատներում: Այժմ հաղիւ թէ Եւրոպայում մի թանգարան գտնուէր, ուր այդ անօթներից տասնեակ օրինակներ չգտնուէին, իսկ՝ մեծ, յայտնի թանգարաններում՝ Նոցա թիւը հազարների է հասնում: Նոցա արժէքը շատ մեծ է, ոչ միայն արուեստական և գեղարուեստական տեսակէտից, այլ նոքա մի տեսակ անգնահատելի աղբիւրներ են Յունաց գիշարանութեան, գրականութեան սլամութեան, Նոցա աւօրեայ կեանքի ուսումնասիրութեան և ուրիշ շատ խնդիրներում, որովհետև այդ անօթները զօրգարած են բազմաթիւ նկարներով, որոնց նիւթը յիշեալ մասնաճիւղերից է առնուած: Խեցի անօթների ուսումնասիրութիւնը յունաց գեղարուեստով պարագողների համար առանձին նշանակութիւն և հետաքրքրութիւն ունի, նաև հին ազգերի փոխադարձ փաճառականական ևն հաղորդակցութեան վերաբերմամբ, ազգերի քաղաքակրթութեան աստիճանը չափելու, իրարից քաղաքականապէս, տնտեսապէս և բարոյապէս ազգման հարցերը որոշելու ժամանակ: Յունաց խեցի անօթների գիւտի գլխուոր տեղերն են ամենից առաջ Յունաստանն ու Իտալիան, ապա Միջերկրական և Սև ծովերի ափերը, մասամբ նաև փոքր Ասիան, մի խօսքով՝ ուր նկատելի է եղել Յունաց ազգեցութիւնը: Հետաքրքրական էր իմանալ՝ արդեօք հին Հայաստանում էլ գործածական չեն եղել այդ տեսակ անօթներ, փաճառականների կամ աշխարհակալ թագաւորների ձեռքով արդեօք այդ փայլուն գեղարուեստական զարգարանքները ներս չեն բերուել, քանի որ եթէ մեր պատմութեանը հետեւելու լինինք, ակնարկներ կգտնենք, որոնք պարզ ցոյց են տալիս, թէ աշխարհակալ թագաւորները մինչև անգամ արձաններ էլ են աւարի տաել, որոնց տեղափոխութիւնը մեծ դժուարութիւնների հետ կապուած էր: Յայտնի է, որ Մովսէս Խորենացին իւր Բ. գրք. ՓԱ. գլ. Լիւղիացոց կրեսոս թագաւորին գերել է տալիս մեր Հայոց թագաւոր Արտաշէսից, հասկառակ Յունաց յայտնի և ճիշտ աղբիւրների վկայութեան, ըստ

որում Պ սրսից կիւրոս թագաւորն է կրեսոսին գերել, բայց խորենացին նոյն գլխում տալիս է մի ուրիշ ճիշտ և գեղարուեստի պատմութեան համար հետաքրքիր տեղեկութիւն, այդ այն է, որ Սկիւզէս և Դիպինոս յոյն քանդակագործները փոքր Ասիայում՝ Լիւզիացոց կրեսոս թագաւորի արքունիքում աշխատել և այնտեղ արձաններ են շինել: Այդ արձանների մասին խօսում է Պլինիոսը և խորենացին, որը ասում է. «Եւ գտեալ (Արտաշիսի) յԱսիայ պղնձաձոյլ ոսկէզօծ պատկերս զԱրտիմիդեայ և զՀերակլեայ և զԱպոլոնի, տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեացին յԱրմաւիր»: Այստեղ մեզ հետաքրքրում է ոչ թէ պատմած գէպքի ուղիղ կամ սխալ լինելը, այլ որ Հայոց թագաւորներն էլ հետեւելով իւրեանց սահմանակից Պ սրսից աշխարհակալներին, ցանկացել են իւրեանց մեհեանները զարդարել գեղարուեստական իշերով, հետեւապէս պէտք է ընդունել, որ Հայաստան ներս են բերուել նաև խեցի անօթներ: Մինչև օրս գեռ բախտ չեմ ունեցել տեսնելու Հայաստանում գտնուած յունական խեցեղէններ, բայց Գրիգորիս վարդապետի ժողովածուի մէջ կան 5 խեցի անօթներ, որոնցից մէկի վրայ նկատում եմ արտաքին՝ յունական ազդեցութիւն: Նոքա բոլորն էլ շինուած են այն տեսակ կաւից, որի գլխաւոր հանքատեղին Նախիջևանի գաւառն է՝ այն է անօթները կրակում այրուելուց յետոյ, մի տեսակ սպիտակ գոյն են ստանում. աւազային շատ մասեր ունենալով ծակեր շատ ունին, միջի հեղուկը դուրս են ծորում և այդ է պատճառը, որ նոցա միջի ջուրը միշտ զով է մնում, որովհետև գորշիացումը անօթի արտաքին մասից շատ է, ուստի նոքա տեղական արդիւնք են և ոչ ներմուծած: Նրանցից երկուսը պարունակութեամբ թէյի և գինու բաժակի մեծութեամբ՝ սովորական կուլաների ձև ունին և կարող են ծառայած լինել իբրև անուշահամ իւղերի սրուակներ, միւս երեքի թէ ձևն է անսովոր և թէ գժուար է նոյն իսկ բացատրել, թէ նոքա ինչ նպատակի են ծառայել: Մէկի ձևը կոկոսի ընկուզի կեղևի նմանութիւն ունի, կամ կրիայի մէջքի, արտաքուստ ոչ մի զարդարանք ևն. չունի, մինչև անգամ բռնելու տեղ էլ չունի, որ

կարելի լինէր ընդունել իբրև առօրեայ գործածութեան անօթ, այնպէս որ ահամայից պէտք է ենթադրել, որ նա ծառայել է իբրև կրօնական ծիսակատարութեան համար որոշած մի անօթ: Նոյն այդ նպատակի համար ծառայած պիտի ընդունել նաև միւս երկու անօթները, որոնք երկուսն էլ մի ձև ունին տարբեր մեծութեամբ: Նոցա ձևը շատ նման է մեր սօլորական թէյամաններին, բերանը նեղ, մէջքը լայն դուրս ընկած, ստորին մասը դարձեալ նեղ, մէջքի վրայ շինած է մի խողովակ միջի հեղուկը թափելու նպատակաւ, իսկ դրա հակառակ կողմում կայ մի փոքրիկ բարձրութիւն, որ հաղիւ կարելի լինի երկու մասերի ծայրով բռնել, հետևապէս չի ծառայիլ իբրև ունելիք. դրա մէջ կայ նաև մի ծակ, բայց այնքան փոքր է, որ չի կարելի ընդունել, որ նրանով պարան են անցրել անօթը քաշ անելու ժամանակ: Նրանով ջուր խմել, կամ նոյն իսկ ջուր ածել նրանից ոչ մի յարմարութիւն չկայ. առայժմ միակ բացատրութիւնն է. նա եղել է ճրագ հին գերեզմանատներում, որովհետև այնտեղ է գտնուել, թէև այդ ենթադրութիւնը հակառակ է նրանց չափազանց մեծութեան. մէկը պարունակում է չորս շիշ ջուր: Սորա արտաքին մասը, անօթի ուսերը, եթէ կարելի է այսպէս ասել, զարգարուած է քառակուսի նշաններով, իսկ միւսի ամբողջ արտաքին մասը ծածկուած է այն կարմիր ներկով, որին Firnis — քրագեղ են կոչում, և որով ներկուած են հին յունական անօթները, հէնց այդ է պատճառը, որ ընդունեցինք արտաքին ազգեցութեան թեթև հետքերը:

Հայր Պրիգորիսի բերած միւս առարկաները թէև համեմատած յիշեալների հետ այնքան էլ հին չեն, բայց ամբողջութեամբ հետ մեզ համար շատ թանգ են: Մանաւանդ ուշագրութեան արժանի են սև թերթակալից (Schieferstein) շինած, վարդի թփերով և ուրիշ զարգարանքներով պաճուճած մի թէյաման և մի կաթնաման, որ գտնուել են Հին Նախիջևանի աւերակներում, բայց երկուսի ձևը այնքան նոր — modern — է, որ դժուար է նրանց մեծ հնութեամբ հաւատալ: Վժբապարար մեր օրերում հնութիւնների կեղծողներ շատ կան, որովհետև շատ տեղ նոյն իսկ տգէտ

ժողովուրդը հասկացել է, որ հնութիւնները մեծ արժէք ունին գիտնականների աչքում: ուստի նմանութիւններ շինելով թաղում են հողի մէջ և ուրիշի ներկայութեամբ քանդում են արդէն նախապէս քաջ յայանի տեղը և իբր թէ միանգամայն անսպասելի գտնում են, ինչ որ իրանք են ծածկել: Առարկաների մէջ կան նաև ժանգով կիսով չափ սչնչացած մի սուր, մի քանի սլաքներ, մի դրոշակի պղնձեայ գլուխ, որի վրայ արաբերէն լեզուով գրած է. «Նա կազեալ հաջաթ, ա՛հա իլալահ» = «Ո՞՞՛՛ Տէր, որ կատարող էք բոլոր ցանկութեանց», մի կոթը ծալուող թուայ, մի զանգակ ևն ևն:

Ընթերցողը տեսնում է, որ արժանապատիւ Հ. Գրիգորիսի շնորհիւ մեր թանգարանը կհարստանայ մի քանի հարիւր կտոր իրերով, որոնց մեծ նշանակութիւնը կիմանան ըստ արժանոյն գնահատել հնագէտները: Նա խոստացել է անընդհատ շարունակել իւր ժողովածոյքը և յոյս ունի, որ կարող է ժամանակին մեր թանգարանում առանձին մաս գրաւել. ի սրտէ նրան եռանդ և յարատևութիւն բարեմաղթելով, յոյս ունինք, որ գուցե՛ ի գործին կգտնուին հետևողներ:

Ք.